ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11—12, 1959 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՄԱՍԻՆ

(Նախան մեր թվարկության 3-րդ դ.—մեր թվարկության 3-րդ դ.)

Հելլենիստական Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական պատմության հետազոտման ասպարեզում ձեռք բերված զգալի հաջողությունների կապակցությամբ, առաջնահերթ նշանակություն է ստանում նույն ժամանակաշրջանի նյութական կուլտուրայի և արվեստի ուսումնասիրման հարցը։ Սակայն, վերջիններիս հուշարձանները և բովանդակությունը բացահայտելու կոչված հնագիտական աշխատանքները նոր-նոր են ծավալվում, ուստի մեզ մնում է կատարել նախնական աշխատանք և ի մի հավաքել, դասակարգել ու հետազոտել այն ամենը, ինչ հին Հայաստանի կուլտուրայի մնացորդներից պատահականությունը պահպանել է կործանումից և հասցրել է մեզ։ Այս տեսակետից որոշ նյութ է կուտակվել հելլենիստական շրջանի հայկական տարազը ուսումնասիրելու համար։

Հայկական տարազը, իր գոյության սկզբնական ժամանակաշրջանից մինչև ուշ միջնադար, հետազոտման առարկա է դարձել Վ. Հացունու «Պատմութիւն հայ հին տարազին» (Վենետիկ, 1923) ուշագրավ աշխատության մեջ։ Զգալի տեղ է հատկացված այդ մենագրության էջերում նաև նախքան մեր էրայի 3-րդ դարից մինչև մեր էրայի 3-րդ դարի հայկական տարազի պատմությանը։ Սակայն մի շարք նկատառումներ անհրաժեշտ են դարձնում կրկին անդրադառնալ նշված ժամանակաշրջանի հայկական տարազի ուսումնասիրմանը։

Այսպես, օրինակ, հեղինակը հարմար է գտել շարադրելու մեզ հետաքրքրող նյութը ըստ «Մար-Սելևկյան շրջան» և «Պարթևական շրջան» վերնագրված գլուխների, հավանարար ընդգծելու համար կուլտուր-պատմական այն աղերսները, որոնք ըստ նրա կարծիքի առկա էին Հայաստանի նյութական կուլտուրայի զարգացման այս կամ այն ընթացաշրջանում։

Այնինչ հին Հայաստանի նյութական կուլտուրայի ամբողջական ուսումնասիրումը և նրա պերիոդիզացիայի ենթարկելու փորձը[1], ակներևաբար ցույց են տալիս, որ նշված աղերսներն ու ազդեցությունները բնավ էլ բնորոշ չեն նշված ժամանակաշրջանի ոչ կուլտուրայի համար ընդհանրապես, ոչ էլ տարազի համար մասնավորապես։

Ոչնչով հիմնավորված չէ հեղինակի բացասական վերաբերմունքը հայկական հելլենիստական կուլտուրայի ուսումնասիրման համար աղբյուր հանդի-

[1] Г. А. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении, Известия Ак. наук АрмССР, 1957, № 2, стр. 77—90.

սացող, Հայաստանի հարևան Կոմմագենե երկրի նախքան մեր էրայի 1-ին դարին պատկանող Նեմրութ-դաղ կոչվող վայրի հուշարձանների նկատմամբ։ Կոմմագենե երկրի և Հայաստանի քաղաքական[2], կուլտուրական[3] սերտ կապերը, հատկապես Ն. մ. թվ. առաջին հարյուրամյակներում երաշխիք են այն բանի համար, որ երկրի թագավոր Անտիոքոս Առաջինին, հայկական՝ Տիգրանյան թագով պատկերող Նեմրութ-դաղի բարձրաքանդակները[4], կարող են վստահությամբ դասվել հայկական տարազի ուսումնասիրման համար արժանահավատ աղբյուրների շարքում։

Վերջապես մի քանի թռուցիկ, կուլտուր-պատմական հետևություններ անելու միտումից ելնելով է, որ ձեռնամուխ ենք եղել այս հարցի քննարկմանը։

Հայկական հելլենիստական տարազի ամենաընդհանուր պատկերը վերարտադրելու համար պիտանի են մի շարք արժեքավոր աղբյուրներ։ Նրանք վերաբերում են հավասարապես, ինչպես նյութական կուլտուրայի հուշարձաններին, այնպես և հին աշխարհի մատենագիրների տեղեկություններին։

Կոմմագենեի վերը հիշված բարձրաքանդակներից բացի (նկար 1) հայկական տարազի հիմնական գծերի բացահայտմանը նպաստում են. Հայաստանը անձնավորող մեր էրայի 2-րդ դարի մի քանդակ[5], որը պահպանվում է Նեապոլիսի թանգարանում, նախքան մեր թվ. առաջին դարերի հայկական դրամները[6], մեր թվ. առաջին դարերի հռոմեական մի շարք դրամներ[7], Գառնիի հնադիտական պեղումներից հայտնաբերված նյութերը[8] և այլն։ Հայկական տարազի հարցերի հետ առնչվող գրավոր աղբյուրներից պետք է նշել Ստրաբոնի (նախքան մեր թվ. 1-ին դարի վերջը, մեր թվ. 1-ին դարի սկիզբը) և Լուկիան Սամոսատցու (մեր թվ. 2-րդ դար) աշխատությունները, որոնց մեջ կարելի է գտնել հակիրճ, բայց կարևոր տեղեկություններ հայկական տարազի մասին։

Թվարկված աղբյուրների իրար հետ համադրման և համեմատման եղանակով, հնարավոր է դառնում որոշելու մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայկական տարազի հետևյալ բաղադրիչ մասերը։

Պատմուճան։ Նյութական կուլտուրայի և գրավոր աղբյուրների տվյալների բախտավոր զուգադիպությամբ հաջողվում է վեր հանել այս զգեստի ընդհանուր տեսքը։

---

[2] E. Honigmann, „Kommagene" Paulys Reallenzyclopadie der Klassischen Altertumswissenschaft, Supplementband IV, 1924 և Г. Тирацян „Страна Коммагена и Армения", Известия Ак. Наук АрмССР, Общест. науки 1954, № 3, стр. 69—74.

[3] Г. А. Тирацян, „Материальная культура Армении первых веков н. э. по данным некрополя и бани в Гарни" (автореферат диссертации), Ленинград, 1956, стр. 5.

[4] K. Humann, O. Puchstein: Reisen in Kleinasien und Nordsyrien", Berlin. 1890, *տախտակ* XXXVIII, *Նկ. 2, տախտակ* XXXIX, *Նկ. 1, 2 ինչպես նաև Անտիոքոս թագավորի հոր՝ Միհրդատի Նորագյուտ բարձրաքանդակը, տես* F. K. Doerner, Th. Goel. „The tomb sanctuary of Mitradates of Kommagene and the discovery of a superb relief: recent excavations of Arsameia in Turkey". The Illustrated London News". 1955, July 2, *Նկ. 11, էջ 25։*

[5] *Վ. Հացունի, Նշվ. աշխ. Նկ. 36, էջ 81։*

[6] V. Langlois. Numismatique genéral de l'Armenie, .Paris, 1859, *տախտակ* I, II, III.

[7] *Վ. Հացունի, Նշվ. աշխ. Նկ. 35, 38, 40։*

[8] Б. Н. Аракелян, Гарни I, Ереван, 1949; Гарни II, Ереван, 1956.

Կոմմագենե երկրի Անտիոքոս I թագավորը և Միհր աստվածը
(ըստ Հումանի և Պուխշտայնի)

Ստրաբոնը[9] ու Լուկիան Կամոսատցին[10] հատկապես նշում են, որ հայերը զգեստավորվում էին երկար, շապիկաձև հանդերձով, պատմուճանով։ Ինչպես երևում է մի շարք հուշարձաններից, այդ զգեստը հասնում էր մինչև ոտքի թաթերը։

Նշմարվում է այդ պատճառով դոյություն ունեցող ձգտումը, մի կերպ բարձրացնել պատմուճանը, որպեսզի նա չխանգարի քայլելիս կամ ձիավարելիս։ Այդ անում էին տարբեր եղանակով։

Հայաստանը անձնավորող քանդակի վրա երկար պատմուճանի ներքևի եզրերը պարզապես բարձրացված են ու մտցված գոտիի մեջ։ Կոմմագենեի բարձրաքանդակների վրա այդ արված է երկու ժապավենների օգնությամբ, որոնք ամրացված են գոտիից, առջևից և ետևից, և անցնում են ոտքերի միջով։ Այդ երկար պատմուճանը երբեմն թևավոր էր, երբեմն անթև, բայց նա անպայման գոտևորվում էր, ինչպես այդ երևում է Ստրաբոնի՝ հայկական տարազի նկարագրությունից և հայ տարազը պատկերող վերը թվարկված մի քանի հուշարձաններից։

Պետք է նշել, որ մի դեպքում Հայաստանի արձանի վրա մենք հանդիպում ենք նաև կարճ, մինչև ծունկը հասնող պատմուճանին, որը հագնվում էր երկարի տակը։

Վարտիկ։ Հայերին ամբողջ հասակով պատկերող հուշարձանների մեծամասնության վրա մենք հանդիպում ենք տարազի այս մասին։ Նա բավականին նեղ էր, հարում էր ամբողջ ոտքին և ըստ երևույթին մտցվում էր կոշկի մեջ։ Հնարավոր է, որ գուլպաների հետ կազմում էր մի ամբողջություն, կարված լինելով նրանց հետ[11]։

Կոշիկ։ Կոմմագենյան բարձրաքանդակների վրա լավ նշմարվում է ցածր կոշիկը, որի վերևի եզրը պարզորոշ գծագրված է, ինչպես նաև կապերի թելերը, որոնց ծայրերը կախված են երկու կողմերից։

Քղամիդ, մեկնոց։ Ուսերի վրա գցվող վերարկու էր այս, որի վերևի ծայրերը ամրացվում էին կրծքի աջ կողմի վրա։ Պատկերված մեկնոցներն ու քղամիդներն իրարից տարբերվում էին հանգուցավորման եղանակով։ Հայաստանը անձնավորող քանդակի վրա մեկնոցը պարզապես ամրացված է կլոր ճարմանդով, ինչպես այդ ընդունված է հունա-հռոմեական տարազի նմուշների վրա։ Կոմմագենե երկրի բարձրաքանդակները այս ձևից հետաքրքիր և յուրահատուկ շեղում են տալիս։ Քնարանման կամ կլոր մեդալիոնների օգնությամբ քղամիդի եզրերին են ամրացված մեկական ժապավեն, որոնք ապա ազատ կերպով հանգուցավորվում են։ Քաղաքատիպ վայրերից շարքային բնակիչների մեկնոցները ամրացվում էին բրոնզյա հատուկ շքասեղներով, որոնց նմուշները հայտնաբերվեցին Գառնիի պեղումների ընթացքում[12]։

Գլխի հարդարանքը մեծ բազմազանություն է դրսևորում և իրավամբ նա կարող է նյութ ծառայել ինքնուրույն ուսումնասիրության համար։ Սույն հոդ-

[9] «Աշխարհագրություն», գիրք XI, գլուխ 14։ 12։

[10] «Ինչպես պետք է գրել պատմությունը», բաժին II, տես К. В. Тревер, „Очерки по и истории культуры древней Армении", М-Л, 1956, стр. 227.

[11] Այդպիսի նմուշների մենք հաճախ հանդիպում ենք, օր. Պերսեպոլիսի (Իրան) բարձրաքանդակների մոտ, տես E. Schmidt, „Persepolis", Chicago 1953, ինչպես նաև այլ վայրերում տես, K. V. Trever, „Excavations in Northern Mongolia, Leningrad, 1932, տախտակ XX, նկ. 1, 2։

[12] Б. Н. Аракелян, Гарни I, Ереван, 1951, նկ. 46 և էջ 53—54։

վածի սահմաններում, իհարկե, ի վիճակի չենք անդրադառնալու այդ հարցին ամենաընդհանուր եղանակով անգամ։ Միայն պետք է նշել, որ նրա տեսակները բավականին ինքնատիպ, հայերին հատուկ ձևով են։

Հայկական հելլենիստական տարազի այս ընդհանուր պատկերը, որի բաղկացուցիչ հիմնական մասերը փորձեցինք վեր հանել, վերաբերում է հիմնականում հայ հելլենիստական հասարակության վերնախավի տարազին և վերջնական չի կարող համարվել։ Կասկածից դուրս է, որ հնագիտական հետագա աշխատանքները արժեքավոր տվյալներ կտան նաև բուն ժողովրդական տարազի մասին։ Պետք է նշել նաև, որ չնայած մեր տրամադրության տակ գտնվող որոշ նյութերի առկայությանը, մեր գիտելիքների տվյալ էտապում, անհնար է երևան բերել որևէ էվոլյուցիա, փոփոխություն հայկական տարազում՝ այդ հին ժամանակներում։ Այս պայմաններում ստիպված ենք բավարարվել նախքան մեր թվ. 3-րդ դարից մինչև մեր թվ. 3-րդ դարի, հայկական տարազի անփոփոխ, ստատիկ պատկերով։

Այս վերապահություններով հանդերձ, նյութական կուլտուրայի հուշարձաններից և գրավոր աղբյուրների համադրումից ստացված տվյալները ամենայն ուշադրության արժանի են, թեկուզ ի նկատի ունենալով այն հնարավորությունները, որոնք նրանք ընձեռում են մեզ, մի քանի հետաքրքիր զուգահեռներ անցկացնելու համար։ Այս տեսակետից օգտակար է և ուսանելի հայկական հելլենիստական տարազի բաղդատումը Հայաստանին սահմանակից կուլտուրական երկու աշխարհներում, արևմտյան-հունա-հռոմեականում և արևելյան-իրանականում հանդիպող տարազի հետ։

Այս ճանապարհով հնարավոր է դառնում արձանագրելու նրանց միջև գոյություն ունեցող աղերսները, միևնույն ժամանակ վեր հանելով հայկական տարազի տեղական, ինքնատիպ գծերը։

Հունա-հռոմեական և հայկական տարազների ամենամակերեսային համեմատումը երևան է բերում մեծ տարբերություններ։ Հիրավի հունա-հռոմեական տարազին խորթ է, արևելքում և ինչպես տեսանք, Հայաստանում տարածված, ամբողջ ոտքին հարող երկար վարտիկի գործածումը[13]։ Այդ տարբերությունը լիովին զգացել ու գիտակցել են հայերին ու նրանց ազգակից ժողովուրդներին պատկերող հուշարձանների հեղինակները (հույն կամ հռոմայեցի)։ Հայկական տարազը տարբերվում է արևմտյան տարազի նմուշներից, նաև իր երկար, յուրօրինակ պատմուճանով։ Հունական և առավելապես հռոմեական տարազին հատուկ է, որպես կանոն, կարճ մինչև ծնկները հասնող խիտոնը[14]։ Ճիշտ է, հունական տարազի հնագույն օրինակների վրա մենք հանդիպում ենք երկար նմուշներին ևս[15]։ Սակայն, նախքան մեր թվ. 5-րդ դարից սկսած, նրանք անհետանում են և տեղի են տալիս կարճ ձևերին։ Երկար պատմուճանը պահպանվում է միայն մարդկանց հատուկ կատեգորիաների՝ երաժիշտների, քուրմերի, դերասանների մոտ։ Նման հանգամանքը նկատել է նաև Ստրաբոնը, իր ժամանակի հայկական տարազի մասին խոսելիս։ Նա հատկապես նշում է,

---

[13] E. Saglio, „Braccae", Daremberg-Saglio, Dictionaire des antiquites grecques et romaines", v. I, p. 746, 747.

[14] Amelung, „Chiton" Paulys, Reallenzyclopadie der Klassischen Altertumswissenschaft, „Stuttgart, 5. III, 2, p. 2333.

[15] Amellung, Նույն տեղում, համեմատիր նաև F. Studnlezka, „Beitrage zur Geschichte der altgriechischen Tracht Wien, 1886, p. 59 և հաջորդ։

որ հայկական տարազին հատուկ երկար զդեստը Հունաստանում, որպես բացառություն հագնում էին ժամանակակից ողբերգակները բեմում։

Հայերի երկար պատմուճանը, ըստ երևույթին իր արմատներն ունի հին արևելքի մի շարք ժողովուրդների՝ ուրարտացիների, խեթերի ասորեստանցիների տարազի մեջ։ Այդ ժողովուրդների մոտ մենք հաճախ հանդիպում ենք համարյա մինչև գետին հասնող զդեստին[16]։

Այս ակնհայտ տարբերություններով հանդերձ, երկու տարազների մեջ գոյություն ունեն նաև նմանություններ։ Բացառված չէ, օրինակ, որ քղամիդը կամ մեկնոցը, այն ձևով, որ նա պատկերված է վերևում հիշատակված հուշարձանների վրա, փոխառնված լինի հունա-հռոմեական տարազից։

Եթե իրանական տարազը բաղդատելու լինենք հայկական տարազի հետ, ապա այստեղ ևս հանդես կգան տարբերիչ էական գծեր։ Ճիշտ է, քննարկվող ժամանակաշրջանի հայկական տարազը ավելի շուտ ընդհանուր գծեր է ցուցաբերում արևելյան մի շարք ժողովուրդների տարազների, այդ թվում և իրանականի (պարթևականի) հետ։ Այդ միանգամայն բնական է։ Սակայն մոտիկից ծանոթանալով, օրինակ, պարթևական հուշարձանների հետ, մենք անմիջապես կնկատենք դրսևորվող տարբերությունները։ Այս առավելապես նշանակություն ունի, եթե ի նկատի ունենք, որ մեր թվ. 1-ին դարի հռոմեական մատենագիր Ջակիտոսի՝[17] հայոց և պարթևների միջև գոյություն ունեցող ընդհանրությունների մասին տված տեղեկությունների տպավորության ներքո, հետազոտողները հաճախ հակված են լինում չափազանցնելու այդ ընդհանրությունները։

Հայկական և պարթևական տարազների զուգահեռ ուսումնասիրությունից երևում է, որ նշված տարբերությունները դրսևորվում են գլխի հարդարանքի և պատմուճանի մեջ։

Պարթևական բոլոր հուշարձաններում անխտիր պատկերված է իրանցիներին դեռ վաղ ժամանակներից հատուկ կարճ, մինչև ծնկները հասնող պատմուճանը[18], որը, ինչպես տեսանք, զանազանվում է այդ հանդերձի հայկական նմուշներից։

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ չնայած որոշ աղերսների, որոնք, ի դեպ, անխուսափելի են կուլտուրապես իրար հետ շփվող ժողովուրդների համար, հելլենիստական դարաշրջանի հայկական տարազը կարողացել է պահպանել իր ուրույն, հիմնական գծերը։ Այս հանգամանքը որոշ նշանակություն պետք է ունենա հայկական հելլենիստական կուլտուրայի ամբողջական ուսումնասիրման համար։ Միևնույն ժամանակ ակներև է դառնում, որ հայկական հելլենիստական կուլտուրայի վերջնական բնույթը պարզելու ուղիները անցնում են այդ ժամանակաշրջանի նյութական կուլտուրայի առանձին բնագավառների, այդ թվում և տարազի հետազոտման միջով։

---

[16] Տես Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, նկ. 74, 75, 91 և H. Bossert, "Altanatolien" նկ. 507, 793, 836, 919, 951, և Բրիտանական թանգարանի նկարները № 353, 354, 375, 396։

[17] Տարեգրություններ, XIII, 34.

[18] Отчет Археологической Коммиссии за 1906 г. С. П. Б., 1909, նկ. 35, 39, 41, R. Ghirschman, „Un bas-relief d'Artaban V avec inscription en pehlevi Arsacide „Monuments et memoires Piot, v. 44, Paris, 1950, նկ. 1, էջ 98, տխտ. XI; M. I. Rostowtzeff, „The social and economic history of the hellenistic world „Oxford, 1941, հ. II, տխտ. XCVIII; H. Seyrig, Antiquités syriens" „Armes et costumes iraniennes de Palmyre" Syria, 1937, v. XVIII, pl. I, III, IV, fig. 1, 2, 3.